Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ՝ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն, ք. Գիլ, 19-ից 22-ը մարտի, 2025 թվական

4. Հրավիրող կողմը

Եվրոպական հանձնաժողովի միացյալ հետազոտական կենտրոն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Եվրոպական հանձնաժողովի միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի 135-րդ նիստին

6. Քննարկված թեմաները

1. Միացյալ հետազոտական կենտրոնի գլխավոր տնօրենի զեկույցը,
2. Միացյալ հետազոտական կենտրոնի 2025-2027թթ. աշխատանքային ծրագիրը և բյուջեն,
3. Եվրոպական հանձնաժողովի միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի նախագահի, ավագ փոխնախագահի և փոխնախագահի ընտրությունների նախընտրական փուլի անցկացում,
4. Միացյալ հետազոտական կենտրոնի կողմից իրականացվող ծրագերի վերաբերյալ հաշվետվությունները,
5. Թեմատիկ զեկույցներ,
6. Այցելություններ Միացյալ հետազոտական կենտրոնի լաբորատորիաներ,
7. Այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի 135-րդ նիստին ներկայացվել են ՄՀԿ զեկույցը, 2025-2027թթ. աշխատնքային ծրագիրը և բյուջեն, Կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերի ընթացքն ու ասոցացված

երկրների մասնակցության արդյունքները: Ներկայացվել են զեկույցներ «Արհեստական բանականության դերը առողջության ոլորտում», «Կայուն սննդի համակարգեր», «Միջուկային երաշխիքներ», «Միջուկային անվտանգության համար ենթակառուցվածքների զարգացում և հեռանկարներ», «Մրցունակ և դիմացկուն Եվրոպա. անվտանգություն և պաշտպանություն», «ԵՄ կանաչ գործարքի ապահովում» թեմաներով: Հայտարարվել են նաև Եվրոպական հանձնաժողովի միացյալ հետազոտական կենտրոնի կառավարիչների խորհրդի նախագահի, ավագ փոխնախագահի և փոխնախագահի ընտրությունների նախընտրական փուլի արդյունքները: Քննարկվել են Միացյալ հետազոտական կենտրոնի ընդլայնմանն առնչվող հարցեր, ներկայացվել են հաշվետվություններ Կենտրոնի ծրագրերում ասոցացված երկրների մասնակցության վերաբերյալ:

Սարգիս Հայոցյանը ներկայացրել է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումները, բարձրագույն կրթության և գիտության ոլորտների զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագիրը, մասնավորապես ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերը, Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանն ուղղված քայլերը և այն գիտական ուղղությունները, որոնց շրջանակում հնարավոր է զարգացնել համագործակցությունը Միացյալ հետազոտական կենտրոնի լաբորատորիաների հետ: Սարգիս Հայոցյանը ներկայացրել է նաև «Ակադեմիական քաղաք» նախագիծը, որի նպատակն է ստեղծել ժամանակակից կրթական, հետազոտական և նորարարական գործունեությունը երաշխավորող միջավայր: «Ակադեմիական քաղաք» նախագծի շրաջանակում նախատեսվում է ստեղծել ժամանակակից լաբորատորիաներ՝ հագեցած գերժամանակակից սարքերով: Ուստի կարող է առաջանալ Միացյալ հետազոտական կենտրոնի ընձեռած հնարավորությունների շրաջանակում համագործակցային կապերի խթանման էական հնարավորություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ժամանակ կայացվել են օրակարգային հարցերի վերաբերյալ որոշումներ: Հայաստանի Հանրապետությանն առնչվող որոշումներ չեն կայացվել:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կառավարիչների խորհրդի նիստերը շարունակվելու են պարբերաբար, ընդ որում հաջորդ՝ 136-րդ նիստի ժամանակ ընտրվելու է կառավարիչների խորհրդի նոր նախագահը և տեղակալները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան
24.03.2025թ.